ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/66

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.11.2017թ. թիվ 03/26-3/21233-17 գրությամբ «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 85772452) (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4078 գրության հիման վրա, 20.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4078 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Աբգար Ավետիսյանը գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Ա/Ձ Աբգար Ավետիսյանին armep.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում Ա/Ձ Աբգար Ավետիսյանի կողմից պահանջվող փաստթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց Ա/Ձ Աբգար Ավետիսյանի հայտը մերժել»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. **<u>«Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ն Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում 2-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Աբգար Ավետիսյանը գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Ս.թ. հոկտեմբերի 30-ին էլ. փոստով ստացել ենք նամակ (ոչ ավտոմատ ծանուցում): Նամակը բացելուց առաջին տեսանելի հատվածում հղում է տրվում Armeps էլ. կայքին: Աշխատակիցը հետևել է նշված հղմանը, որն էլ իր հերթին պահանջել է ծածկանուն և գաղտնաբառ՝ համակարգ մուտք գործելու համար, ինչպես նաև նամակի միջնամասում գրված էր «խնդրում ենք չպատասխանել այս նամակին», ինչն էլ թյուրիմացության մեջ է գցել նրան, և մտածելով, որ հերթական հայտարարություն է info@armeps.am կայքից՝

ուշադրություն չի դարձրել նամակի ամենավերջում կցված անհասկանալի տառերով վերնագրված փաստաթղթին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ստացված գրությունից հետո է միայն պարզվել, որ վերոնշյալ նամակում կցված անհասկանալի տառերով վերնագրված փաստաթուղթը պահանջում է ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել այդ փաստարկները և Ա/Ձ Աբգար Ավետիսյանին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և տույժեր չկիրառել»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պողոսյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2017/66 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2017թ. թիվ 03/26-3/21233-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.11.2017թ. թիվ ԴՎԱ/4078 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.10.017թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 և 10.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 4 արձանագրությունները, Ա/Ձ-ի Խորհրդին ուղղված գրությունը, Պատվիրատուի կողմից Ա/Ձ-ին ուղարկված էլեկտրոնային նամակի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ըմպելու ջրի և օշարակի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ն:

Հանձնաժողովը 30.10.2017թ. նիստի (շարունակություն) թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Ընկերությանը ճանաչել է 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստթղթերը:

Հանձնաժողովը 10.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ա/Ձ Աբգար Ավետիսյանի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստթղթերը գնումները համակարգողի էլ.փոստին չեն ուղարկվել, և որոշել է վերջինիս հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 06.12.2017թ. կայացած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ 30.10.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է բազմաթիվ ծանուցումներ՝ info@armeps.am հասցեից, սակայն դրանց որևէ մեկի վերնագիրը չի պարունակել որակավորումը հիմնավորող փաստթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում: Ավելին, խնդրո առարկա հանդիսացող ծանուցման միջնամասում նշված են եղել «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» բառերը, ինչից ելնելով էլ մասնակիցը չի անդրադառձել նշված ծանուցման բովանդակությանը: Խորհրդի կողմից պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու վերաբերյալ գրությունը ստանալուց հետո է միայն պարզվել, որ վերոնշյալ նամակում կցված անհասկանալի տառերով վերնագրված փաստաթուղթը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցում-պահանջ:

Միաժամանակ, Ա/Ձ-ի ներկայացուցիչը Խորհրդին խնդրեց տեղի ունեցածը համարել թյուրիմացություն, և Ա/Ձ-ին չներառել Ցուցակում:

Պատվիրատուի ներկայացուցիչն իր հերթին հայտնեց, որ նշված ծանուցումը սահմանված ժամկետում Հանձնաժողովի կողմից ուղարկվել է Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին, միաժամանակ ընդունելով, որ վերջինիս վերնագիրը որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստթղթերը ներկայացնելու պահանջին վերաբերող որևէ նշում չի պարունակել և առաջին հայացքից ճանաչելի չի եղել մասնակցի համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ, բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցման վերնագրում որևէ կերպ չի արտացոլվել նման պահանջ պարունակող փաստաթուղթ հանդիսանալու փաստը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ վերը նշված ծանուցմանը կցված էլեկտրոնային փաստաթուղթը բացվում է «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» նշմամբ:

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Ա/Ձ Աբգար Ավետիսյանը հնարավորություն չի ունեցել info@armeps.am էլեկտրոնային հասցեից ստացված բազմաթիվ ծանուցումների թվից տարբերել Հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը:

Խորհուրդը գտնում է նաև, որ «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» գրառումը նույնպես կարող էր նման թյուրիմացության պատճառ դառնալ, քանի որ նշված ծանուցման ստացումն ինքնին ենթադրում է մասնակցի կողմից սահմանված ժամկետում պատասխանի տրամադրում՝ հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստթղթերի ձևով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.11.2017թ. գրությամբ «Աբգար Ավետիսյան» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 85772452) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ